ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«19» 05 2023թ.
No 004313

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ՀԱՅԿ ԱԼԻԽԱՆՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Հր. Աճառյան 26/2,
էլ. փոստի հասցե՝ Hayk.develop@gmail.com)

Ի պատասխան Ձեր 10. 05"2023թ. գրության

Հարգելի՛ պարոն Ալիխանյան,

Ձեր կողմից 2023 թվականի մայիսի 10-ին Մրցակցության պաշտպանության հանձնաժողով ներկայացված գրության կապակցությամբ տեղեկացնում ենք, որ այն վերահասցեագրվել է Պետական եկամուտների կոմիտե:

Կից ներկայացվում է վերահասցեագրելու մասին գրությունը:

Առդիր՝ «1» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Կատարող՝ Զարուհի Մելքումյան
հեռ.՝ (060) 830 840 (240)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 6 հուլիսի 2023 թվական:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«_____» _____20 ___թ.
No _____

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գևորգյան,

Ֆիզիկական անձ Հայկ Ալիխանյանը (այսուհետ նաև՝ **Հ. Ալիխանյան**) 2023 թվականի մայիսի 10-ին հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) է ներկայացրել Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (այսուհետ՝ **Հանձնաժողով**)՝ հայտնելով, որ «Արարատ» կապույտ տուփով ծխախոտը ՀՀ որոշ առևտրի օբյեկտներում վաճառվում է տուփի վրա մակշված գնից (ԱՄԳ՝ 850 ՀՀ դրամ) ավելի բարձր գներով: Մասնավորապես, նշված ծխախոտը Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի «Գնթունիք» խանութում և Լոռու մարզում գտնվող խանութում վաճառվում է 1000 ՀՀ դրամով, իսկ Երևան քաղաքում՝ «Զովք» խանութում, վաճառվում է 930 ՀՀ դրամով:

Վերը նշվածի առնչությամբ Հ. Ալիխանյանը խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ նկարագրված իրավիճակն առերևույթ կարող է պարունակել հարկային իրավախախտման հատկանիշներ՝ Հաղորդումը վերահասցեագրվում է Ձեզ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Կատարող՝ Զարուհի Մելքումյան
Հեռ. (060) 830 840 (240)

igitally signed by
SHOT VAHANYAN 1411730046